«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Էպոսի դերը հայրենասիրության և ազգայինարժեհամակարգի ձևավորման գործում

Առարկան՝ Հայ գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Եվա Նահապետյան

Ուսումնական հաստատություն՝ թ. 107 միջնակարգ դպրոց

ԵՐԵՎԱՆ 2023

Բովանդակություն

Ներածություն_____2

Գլուխ 1

Էպոսի ծագումն ու կապվածությունը բնաշխարհին ու միջավայրին_____4

Գլուխ 2

Հայի հոգեկերտվածքի դրսևորումները «Սասնա ծռեր» էպոսում_____8

Գլուխ 3

Էպոսի դերը աշակերտի արժեհամակարգի ճիշտ ձևավորման գործում_____12

Վերջաբան_____15

Օգտագործված գրականության ցանկ_____19

Ներածություն

Արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի բազմակողմանի և ներդաշնակ ձևավորման և զարգացման համար: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Վաղվա քաղաքացուն հայրենասիրության ոգով դաստիարակելու և նրա մեջ ազգային արժեհամակարգ ձևավորելու գործում կարևորվում են բազմաթիվ գործոններ՝ ընտանեկան միջավայրը, կրթությունը, մշակույթը, լեզուն, պատմությունը, կրոնը և այլն: Հատկապես կարևոր է անհատի մոտ ազգային ինքնագիտակցության ձևավորման պրոսեցը սկսել հենց դպրոցական տարիքից: Արժեհամակարգի ձևավորման և նրա կայունության զարգացման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները: Այդ բոլոր առարկաների թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես անգնահատելի է լեզվի և գրականության դերը:

Դպրոցական ծրագրով նախատեսված որոշ առարկաների միջոցով (հայոց պատմություն, հայոց լեզու և հայ գրականություն) փոխանցվում են հայ ժողովրդի պատմության հերոսական էջերը, ազգային մշակութային առանձնահատկությունները: Հայ ժողովրդական բանահյուսության մեջ շատ են այն դրվագները, որոնցում վառ են ներկայացված հայրենասիրության և ազգային արժեհամակարգի գաղափարները: Նման կարևորագույն և շատ վառ դրվագներից է ժողովրդական բանահյուսության հիման վրա ստեղծված «Սասնա ծռեր» (կամ «Սասունցի Դավիթ») հայ ժողովրդի ազգային էպոսը (դյուցազնավեպ):

Ազգային բնավորության՝ ազնվության, հայրենասիրության մարդասիրության, ազատատենչության որակները հատկապես վառ և տպավորիչ են ներկայացված հայոց դյուցազնավեպում, ուստի ժամանակակից սերնդի դաստիարակության, նրա մեջ հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման համար չափազանց կարևոր է կրթական գործընթացում մեծ ուշադրություն հատկացնել ժողովրդական էպոսի ուսուցմանը:

Էպոսի միջոցով կարող ենք ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները: Էպոսի հերոսների մասին պատմությունները սովորեցնում են աշխարհը տեսնել հայրենասերի աչքերով: Մեր դյուցազնավեպում փառաբանվում է այն անհատը, որը հանուն հայրենիքի պատրաստ էր զոհել իր կյանքը:

«Սասնա ծռեր» էպոսի դարավոր պատմությունն ապացուցում է, թե ինչպես է բանահյուսական այդ գանձը դարեր ի վեր ոգևորել հայ ժողովրդին, իշխել նրա մտքի ու սրտի վրա և հասել նոր ժամանակներին ու այսօր էլ իր գաղափարներով խիստ այժմեական է և հուզիչ:

«Սասնա ծռեր» դյուցազներգությունը ոգևորել է մեր շատ գրողների, ովքեր այդ նյութով գրել են ինքնուրույն պոեմեր: Դրանցից են Հովհաննես Թումանյանի «Սասունցի Դավիթը» (1902), Ավետիք Իսահակյանի «Սասմա Մհեր»-ը (1917-1937), Եղիշե Չարենցի «Սասունցի Դավիթը» (1933): «Սասունցի Դավիթ» ճյուղը թատերգության են վերածել Հակոբ Օշականը,Վահան Թոթովենցը, Վաղարշ Վաղարշյանը: Այն արձակ վերապատմել է Նաիրի Զարյանը: «Սասնա ծռերը» ժամանակին ցանկանում էր մշակել Դանիել Վարուժանը: Փոքր Մհերի կերպարը ոգևորել է նաև Հրանտ Մաթևոսյանին:

Այս աշխատանքում բարձրացվում է այն կարևոր *հարցը*, թե ինչ դեր կարող է կատարել հայ ժողովրդական էպոսը աշակերտի արժեհամակարգի ձևավորման գործում:

Աշխատանքի *նպատակն* է ցույց տալ, թե ինչպես կարող է «Սասնա ծռեր» էպոսը աշակերտների մեջ ձևավորել և այնուհետև էլ զարգացնել բարոյական լավագույն հատկանիշներ , մեծապես ազդել նրա արժեհամակարգի ձևավորման վրա:

ԳԼՈՒԽ 1

Էպոսի ծագումն ու կապվածությունը բնաշխարհին ու միջավայրին

«Էպոսը հայ ցեղի ապրած կյանքի և հոգեկան

կարողությունների հոյակապ գանձարանն է ու իր մեծության

անհերքելի վկայությունն է աշխարհի առջև» :

Հովհաննես Թումանյան

Ազգային էպոսը ընդհանրապես նկարագրում է տվյալ ազգի ծագումը, զարգացումը, պատմությունը: Այն նաև օգնում է փոխանցել ազգի ինքնորոշման կամ ինքնաճանաչման դրվագները և բազմաթիվ ազգային խորհրդանիշների առաջացման պատմությունը:

Բոլոր ազգերի էպոսների բովանդակությունը հիմնականում պատմական է: Դրանք հաճախ միաձուլվում են առասպելական, երբեմն պատմական, երբեմն չափազանցված պատմական իրողություններին: Այդ ձևով ձևավորվել են պատմա-հերոսական դյուցազնավեպերը, որոնց լավագույն նմուշներից են հունական «Իլիական»-ը, իրանական «Շահ-Նամե»-ն, հայկական «Սասնա ծռեր»-ը:

Հակական մշակույթում «Սասնա ծռեր» ազգային էպոսն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում: Այն ծնունդ է առել Հայկական լեռնաշխարհի ամենագողտրիկ և անառիկ անկյուններից մեկում՝ Սասունում: Սասունը պատմական Մեծ Հայքի Աղձնիք նահանգի տասներորդ գավառն է, որը տարածվում է Հայկական Տավրոս լեռների վրա: Սասունի տարածքում են գտնվում Սիմ, Սնդոք,Ծովասար և Մարաթուկ լեռները: : Սասունի լեռներից է սնվում Տիգրիս գետի Բաթմանա վտակը: Սասունը հարուստ է լեռնային գետակներով և հանքային բազմաթիվ աղբյուրներով: Այնտեղ սարերը հարուստ են ալպյան մարգագետիններով, կլիման խստաշունչ է: Սասնա անառիկ լեռների նկարագրությունը գտնում ենք հենց էպոսում, երբ Սանասարն ու Բաղդասարը, հեռանալով խալիֆայությունից, երկար թափառելուց հետո ընտրում են իրենց բնակության վայրը.

Ու գնացին, գնացին լեռնե՛ր, լեռնե՛ր. . . .

Էդ էրկրին շատ հավնեցան:

Սասունցիներն իրենց լեռների պես ամուր են, համառ, մի քիչ ծուռ և հայրենիք ու ազատություն պաշտող:

Հայոց ազգային էպոսը փոխանցվել է բանասացների և վիպասացների միջոցով՝ տարբեր պատումների ձևով: Ինչպես, օրինակ՝ տարոնցի Կրպոյից Գարեգին Սրվանձտյանը գրի է առել էպոսի պատումներից մեկը և 1874թ. հրատարակել «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» վերնագրով: Այնուհետև Նախո Քեռուց 1889թ. Մանուկ Աբեղյանը գրի է առել մեկ այլ տարբերակ և հրատարակել «Դավիթ և Մհեր» վերնագրով: 1939թ -ին՝ էպոսի ստեղծման 1000-ամյակի առթիվ, 60 պատումների հիման վրա Մանուկ Աբեղյան, Գևորգ Աբով, Արամ Ղանալանյան հեղինակային խմբի միջոցով կազմվել է միասնական, համահավաք բնագիր:

«Սասնա ծռեր» էպոսը, լինելով հայ ժողովրդի մշակույթի պատմության գոհարներից մեկը, իր ժամանակային առումով խոր հնադարից հասնում է մինչև միջնադար: Այն իր մեջ խտացնում է հայ ժողովրդի պատմության տարբեր ժամանակահատվածներ ու մշակութային շերտեր և հաճախ սյուժետային առումով դրանք խառնվում են իրար: Լինելով սերունդների կոլեկտիվ ստեղծագործություն՝ դժվար է որոշել նրա ծագման և ձևավորման ժամանակաշրջանը, ու ինչպես ճիշտ է նկատել Հ. Օրբելին « Արդյոք կարելի՞ է ասել, թե որ թվականին է լույս աշխարհ եկել ժողովրդական էպոսը՝ տասնյակ սերունդների կոլեկտիվ ստեղծագործության պտուղը, եթե նրա հիմնական առանցքը պատմական որոշակի իրադարձություն չէ, որի ժամանակաշրջանն ու վայրը նշված լինեին տեսնելու, շոշափելու, կարդալու կամ վերծանելու ենթակա որևէ հուշարձանով»:1

Էպոսը սկզբնավորվել է այն վաղնջական ժամանակներից, երբ մարդն իր առօրյա հոգսերն հոգում էր տարրական միջոցներով: Զբաղվում էր որսորդությամբ, հավաքչությամբ, անասնապահությամբ և ամենապարզունակ միջոցներով հող մշակում: Նա նաև փորձ էր անում ըմբռնելու իրեն շրջապատող բնությունը, իր կարողությունների չափով փորձում հասկանալ բնության երևույթների առաջացումն ու նշանակությունը՝ դրանց մեկնությունը կապելով գերբնական ուժերի հետ,

---

1. Հ. Օրբելի, Սասունցի Դավիթ, 1961, էջ XXIX

հավատում բնության ուժերին, նրանց երկրպագում, քանի որ նրանցից էր կախված իր բարօրությունը, քանի որ իր անհաջողություններն ու հաջողությունները կապում էր գերբնական ուժերի հետ:

Գ. Սրվանձտյանն իրավացիորեն նշում է, որ «Սասունցի Դավիթ» էպոսի առաջին ճյուղն իր արմատներով ձգվում է դեպի նախաքրիստոնեական ճամանակաշրջան և արձագանքն է Աստվածաշնչի Հին կտակարանում զետեղված այն փաստի, թե Ասորեստանի Սենեքերիմ թագավորի որդիները՝ Ադրամելիքն ու Սանասարը, սրով սպանում են իրենց հորը և փախչում Արարատի երկիրը: Գ. Սրվանձտյանը վկայում է, որ ատվածաշնչյան այդ դեպքը նույնությամբ պատմում են և՛ Մովսես Խորենացին, և՛ Թովմա Արծրունին: «Սասնա ծռեր» էպոսը հայ ժողովրդի հնագույն տիեզերական պատկերացումների, առասպելների և պատմական իրադարձությունների, ականատեսների և նրանց հետնորդների հիշողություններում դրոշմված պատմական իրադարձությունների միաձուլումն է: Այն մի միասնական ամբողջություն է և ժամանակի ընթացքում պատվել է պատմականության արտաքին շերտով:

Հայ ժողովուրդը, և սասունցիներն էլ բացառություն չեն, միշտ շրջապատված է եղել արտաքին և ներքին թշնամիներով և ստիպված է եղել պայքար մղել իր գոյության և ապրելու իրավունքի համար: Նա անընդատ պայքարել է արտաքին զավթողների և ներքին կեղեքողների դեմ: Մեր էպոսում նկարագրվում են այն պատմական դեպքերը, որոնք տեղի են ունեցել 7-10-րդ դարերում՝ արաբական տիրապետության շրջանում:

Վեպում նկարագրված իրադարձությունների և գործող անձանց մի մասը համընկնում են: Ըստ Մ. Աբեղյանի՝ էպոսի գրեթե բոլոր հերոսները համընկնում են պատմական դեմքերին: Նա այդ հերոսների մեջ փնտրում է պատմական իրական անձանց որոշակի գծեր ու արարքներ, որոնք, իր կարծիքով, համընկնում են վիպական հերոսների գծերին ու արարքներին: Եթե «Ազգային վեպ» աշխատության մեջ Մ. Աբեղյանը Թոռնիկի մասին խոսում է իբրև Դավթի հավանական նախատիպի, ապա վերը նշված հոդվածում նա արդեն առանց տատանվելու գրում է. «Վեպի գլխավոր հերոսը՝ Դավիթը, դա Դավիթ Բագրատունին է, որդի Բագրատի»: Նրա կարծիքով՝ Ցռան Վերգոյի կերպարի նախատիպը պատմական անձ է՝ Վիգեն իշխանը,

Քեռի Թորոսը Թեոդորոս Ռշտունին է, Ձենով Օհանը՝ Խութեցի Հովնանը և այլն: Նույնիսկ Ձենով Օհանի հզոր ձայնը նա բացատրում է՝ ելնելով իրական փաստից: Խութեցի Հովնանի մասին նա գրում է. «Թե ինչ մարդ է եղել Հովնանը, պատմությունը լռում է այդ մասին: Անշուշտ, նա հասարակ մարդ չի եղել, որ առաջնորդել է Սասունցոց, հարձակվել Յուսուֆի վրա և դիմադրություն ցույց տվել Բուղային: Եթե նա հասարակ մարդ էլ եղած լինի, ձայնով, այսինքն՝ ձայն ունեցող է եղել, նրա ձայնն անց է կացել… Այդ իմաստով է, հարկավ, գործածված սկզբնապես Ձենով Հովան մակդիրը, որ հետո ժողովրդական վեպի ոգով ըմբռնվել է ֆիզիկական իմաստով՝ իբրև գոռացող»:1

Վիպական հերոսների կյանքի առանձին պահերը ևս, ըստ Աբեղյանի, հիմնված են առանձին պատմական անձերի կյանքի հիման վրա:

Էպոսի ուսուցման ընթացքում այս փաստերը շատ կարևոր է հասցնել աշակերտի գիտակցությանը, որպեսզի նրանք էպոսը չընկալեն որպես հրաշապատում հեքիաթ:

Սակայն վեպը չի սահմանափակվում միայն 9-10-րդ դարերում տեղի ունեցող սոցիալ-քաղաքական իրադարձությունների արտացոլմամբ:

Ինչպես նկատում է Մ. Աբեղյանը՝ «Մեր վեպի էական միջուկը կազմում է 9-րդ դարի Սասունի պատմությունը: Հաջորդ դարերը ազդել են միայն այդ միջուկի կերպարանափոխության վրա, իսկ նախորդ դարերը արաբացոց տիրապետության ժամանակ, համեմատաբար, սակավ նյութ են տվել վեպի համար, չհաշված այն, որ այդ միջուկը ևս, ինչպես կարծում ենք, գալիս է ավելի հին ժամանակներից և 9-րդ դարի դեպքերի ազդեցության տակ միայն շատ զորեղ կերպարանափոխության է ենթարկված»: 2

1.Մ. Աբեղյան «Երկեր », հտ. Ը, Եր. ԳԱ հրատարարակչություն, 1985թ. էջ 266

2. Մ. Աբեղյան, Սասնա ծռեր, երկեր, հ. Ա, Եր. 1966, էջ 373

ԳԼՈՒԽ 2

Հայի հոգեկերտվածքի դրսևորումները «Սասնա ծռեր» էպոսում

Առասպելների, հեքիաթների, ավանդազրույցների, էպոսների հեղինակը ժողովուրդն է, և նա շատ ազատ կերպով իր ստեղծագործություններում դրսևորում է իր ազգային նկարագիրը, ազգային բնավորությունը, հոգեկերտվածքն ու վարքագիծը: Նա ազատ է նաև իր ազգային աժեքների դրսևորման մեջ: Քանի որ առասպելները, էպիկական պատումները, լեգենդներն ու ավանդազրույցները գալիս են դարերի խորքերից ու իրենց վրա կրում են այդ դարերի կենսակերպի ու մտածելակերպի հետքերը, ապա դրանք լավագույնս արտացոլում են Աստծո, բնության, հասարակության, մարդու, կյանքի, ազգի, հայրենիքի, պետության և այլ արժեքների ու երևույթների վերաբերյալ տվյալ ժողովրդի պատկերացումները: Ուստի, էպիկական կերպարների, հատկապես հերոս-դյուցազունների սխրագործությունների, վարք ու բարքի վերլուծությունն անսպառ նյութ կարող է տալ ոչ միայն նրանց, այլև տվյալ ազգի մտածելակերպն ու գործելակերպը, բարոյահոգեբանական յուրահատկությունները որոշ իմաստով հասկանալու ու գնահատելու համար:

Մեր ազգի՝ որպես տեսակի գոյության հիմքում ընկած է հայրենասիրությունը: Այն լավագույնս դրսևորվել է էպոսում: Հայրենասիրությունը էպոսի հերոսների մոտ ժամանակ առ ժամանակ ի հայտ եկած երեւույթ չէ: Սա նրանց առօրյան է և դրսևորվում է նրանց բոլոր գործողություններում՝ օտար զավթիչների դեմ պայքարում, երկրի կառուցման գործընթացում, սոցիալական անարդարության դեմ մղված պայքարում, ընտանեկան ավանդույթների պահպանման գործում: Բոլոր դեպքերում նրանք չեն կորցնում իրենց մարդկային բնավորությունը, նրանք արդար են, ազնվական, մանկական պես պարզ, բռնության հանդեպ անողոք:

Սասնա դուցազունների բոլոր չորս սերունդներին բնորոշ է հայրենիքին ու ժողովրդին անշահախնդիր ու անսասան նվիրվածությունը, նվաճողների ու բռնակալների դեմ հետևողական պայքարը: Դրանք ներկայացնում են պայքար հազարամյակների անհավասար շահագործման պայմաններում գոյության իրավունքի, մեր ազգային արժեքների պահպանման համար, որոնք ժամանակի

ընթացքում ձևափոխվում են, բայց բովանդակությունը մնում է նույնը: Հատկապես Սասունցի Դավթի կերպարով սիրելի հերոսի սխրագործությունները պատկերելիս ժողովուրդն ազատություն է տալիս երևակայությանը :

Մեր էպոսի հերոսների վարքը վերլուծելու համար հիմք է հանդիսանում այն հանգամանքը, որ մենք իրականությունն ընդունում ու գործում ենք՝ ելնելով բարոյականության սկզբունքներից: Մեր հերոսների համար առաջնային են պարտքի ու պատասխանատվության զգացումը, ամոթը, խիղճը, պատիվը, մեծահոգությունը, ազնվությունը: Նրանք իրենց չափանիշներով փորձում են հասկանալ ու գնահատել այլոց գործողությունները և վարքագիծը՝ շատ հաճախ հաշվի չառնելով վարքի կարգավորման և գնահատման իրավական, քաղաքական, տնտեսական այլ ձևերը: Դրա հետևանքով շատ հաճախ մեր ազգային նկարագրում հանդիպում ենք անսահման ու անհարկի մարդասիրության, որ երբեմն հասնում է օտարամոլության, չափից ավելի և ընդգծված մեծահոգության ու ներողամտության: Այն երբեմն ընկալվում է որպես թուլություն և անկարողություն, հանդիպում ենք նաև անհիշաչարության ու անձնուրացության, որը նույնպես ընկալվում է որպես թուլություն և տկարամտություն:

Եթե համեմատենք հայկական ու օղուզական (թուրքական) էպոսները, ապա իսկույն կտեսնենք դրանց բարոյական արժեհամակարգերի տարբերությունները: Օրինակ, թուրք-օղուզական «Քորքութի գիրքը» էպոսում պատմվում է, որ թուրքերի մեջ, ավանդույթի համաձայն, պատանուն անուն չէին տալիս այնքան ժամանակ, քանի դեռ նա չէր կտրել գլուխներ, չէր հեղել մարդկային արյուն: Անվանակոչությունն անմիջականորեն կապված էր մարդասպանության ու արյունահեղության հետ, որը տվյալ դեպքում համարվում էր առնական առաքինություն: Այս կապակցությամբ Հ.Ղ. Միրզոյանը նկատում է. «Գաղտնիք չէ և այն, որ բոլոր էպոսներում տեղի են ունենում և՛ մարդասպանություն, և՛ արյան հեղում, բայց այդ ամենը արվում կամ ցուցադրվում է ռազմի դաշտում՝ հակադիր ուժերի անմիջական բախման ընթացքում: Մյուս բոլոր էպոսների նման օղուզական էպոսը նույնպես հարուստ է այդօրինակ իրողություններով: Սակայն մյուս բոլոր էպոսներից տարբերվում է հատկապես այն բանով, որ նրանում մարդկանց գլուխ կտրելն ու արյուն հեղելը կատարվում է ոչ միայն ռազմի դաշտում թշնամիների հետ բախման ընթացքում, այլև սովորական

կենցաղային պայմաններում, այսինքն՝ մարդկանց գլուխ կտրելն ու արյուն հոսեցնելը դիտվում են որպես տղա երեխայի հասունացման ու առնականացման չափանիշ, իսկ հասուն տղամարդու համար՝ քաջության, պատվի ու արժանապատվության պայման: Ըստ այդմ՝ նորածին տղաներին մինչև տասնվեց տարին լրանալն անուն չի տրվում, որպեսզի այդ ընթացքում պարզ դառնա, թե այդ տեսակետից նա ինչ կարողություններ կդրսևորի, իսկ հասուն տղամարդկանց հասարակական դիրքը, պատիվն ու հարգանքը որոշվում է նրա կտրած գլուխների և հեղած արյան քանակով»:1

Իսկ հայկական էպոսում, երբ Դավիթը Արտատեր Պառավից իմանում է, որ իր հայրը Քուռկիկ Ջալալի և Թուր Կեծակի ունի, մեծ դժվարությամբ է դրանք ձեռք բերում և կռվի գնում:

Դավիթը փոքր հասակից գառնարած ու նախրապան էր և դեպքերի բերումով ու անհրաժեշտությամբ է զենք ու զրահ վերցնում և դուրս գալիս իր երկրի ազատությունն ու արժանապատվությունը պաշտպանելու: Ահա երկու ազգերի իրար հակադիր աշխարհայացքներ ու արժեհամակարգեր: Մեկում՝ արյուն, սպանություն, մյուսում՝ աշխատանք ու բարիք ստեղծելու ձգտում:

Դրանով են պայմանավորված այդ երկու ազգերի իրար խիստ հակադիր բարոյականության կրողների պատմությունն ու կենսակերպը:

Մինչ Մսրա Մելիքը իր բանակին կռվի ուղարկելով՝ ինքը յոթ օրով քուն էր մտել իր վրանում, Դավիթը մենակ է կռվի գնում հսկա բանակի դեմ: Նրա հայրը՝ Մեծ Միհերը, մենակ է ելնում իր երկրին ու ժողովրդին պատուհասող առյուծի դեմ: Կարող է այն թյուր կարծիքը ստեղծվել , թե իրականության բարոյական արժեքավորման գերակայությունը վկայում է տվյալ ժողովրդի ոչ միայն մարդասիրության, բարության, խաղաղասիրության, այլև թուլության, տկարության, խեղճության ու անճարության մասին: Բայց այդ տեսակետը հայկական էպոսի նկատմամբ կիրառելի չէ այն առումով, որ այստեղ բարոյականության պաշտպանները, բարոյական բարձր արժեքների մարմնավորողները հերոս-դյուցազուններ են, ովքեր այնքան ուժեղ են, որ

---

1. Միրզոյան Հ.Ղ., Էպոսը որպես տվյալ ժողովրդի ինքնության ուսումնասիրության աղբյուր (օղուզական էպոսի օրինակով, «Հայոց ինքնության հարցեր», Եր. 2012, էջ 28-29:

ի զորու են կատարելու անհավատալի մեծագործություններ ու սխրանքներ և իրենց կամքը պարտադրելու թե՛ բարոյապես և թե՛ ֆիզիկապես պարտվածներին: Այսինքն՝ նրանք թուլությունից, խեղճությունից դրդված չեն կատարում բարոյական արարքներ, այլ դա իրենց ապրելակերպն է, կենսառճը, մարդկանց, հատկապես ուրիշների հանդեպ վերաբերմունքի կերպը: Ժողովուրդը հայկական էպոսի հերոսներին «ծուռ» է անվանել, որովհետև նրանք խենթ են, նրանց արարքներն ու ապրելակերպը չեն համապատասխանում սովորական չափանիշներին, նրանց անսովոր արարքները ծիծաղ, զարմանք ու երբեմն նաև ծաղր են առաջացնում նաև այն պատճառով, որ չեն տեղավորվում առօրյա նյութական, քաղքենական և ուժի իրավունքի վրա խարսխված բարոյականության շրջանակներում:

ԳԼՈՒԽ 3

Էպոսի դերը աշակերտի արժեհամակարգի ճիշտ ձևավորման գործում

Հայկական էպոսում բազմաթիվ են այն օրինակները, երբ իրար են բախվում երկու անհաշտ բարոյական համակարգեր: Այսպես, Մեծ Մհերը Մըսրա Մելիքի մահվանից հետո նամակ է ստանում նրա կնոջից՝ Իսմիլ Խաթունից, որում վերջինս Մհերին խնդրում է այցելել Մըսր: Նրա նպատակը ամեն գնով դյուցազուն Մհերից որդի ունենալն է, որպեսզի դյուցազունից ծնված դյուցազունը կանգուն պահի Մսրա Մելիքի թագավորությունը:

«Ջա՛նըմ, ինձի մա՛րդ մի հարկավոր է՝
Որ էրկրին տիրություն անի,
Մեր իշխաններ խաղաղեցու» :

Մհերի անխոհեմ արարքի արդյունքում ծնվում է արու զավակ՝ Փոքր Մըսրա Մելիքը, ով, ըստ Իսմիլ խաթունի, պետք է «հայու ճրագը հանգցներ»: Մհերի չգիտակցված արարքի կամ տված խոստմանը հավատարիմ մնալու արդյունքում ծնվում է ևս մի Մսրա Մելիք, որի դեմ անհաշտ պայքար պետք է մղեր նույն հորից աշխարհ եկած Դավիթը: Նա պետք է պայքարեր միայն ու միայն այն պատճառով ու նրա համար, որպեսզի թույլ չտար, որ Սասնա ճրագը հանգցնեին: Նույն՝ «ճրագը վառ պահելու» համար է իր կյանքով հատուցում երդմնազանց եղած Արմաղանը՝ Մհերի կինը: Բարոյականության, արժեհամակարգերի խիստ տարբեր, նույնիսկ հակադիր լինելու մասին է ապացուցում Դավթի և Մելիքի մենամարտի դրվագը: Մելիքը նենգամտորեն ու խաբեությամբ փոսն է գցում Դավթին, մինչ Դավիթը բարձրաձայն ազդարարում է իր գալստյան մասին:

«Ով քընած է՝ արթուն կացեք,
Ով արթուն է՝ ձիեր թամբե՛ք,
Ով թամբեր է՝ զենքե՛ր կապեք,
Ով կապեր է՝ էլե՛ք, հեծե՛ք.
Չ՛ասեք Դավիթ գող-գող էկավ,
Գող-գող գընաց»:

Ազնվության, ասպետականության ինչպիսի դրսևորում: Կամ էլ, երբ Դավիթը լսում է արաբ ծերունու խոսքը և Մելիքի բանակը չի կոտորում, այլ մենամարտի է գնում անձամբ Մելիքի դեմ:

Էպոսի մեր հերոսները բոլորն էլ անչափ մեծահոգի են: Իսկ Դավթի մեջ այդ հատկանիշն ավելին է: Ինչպես նշել է ակադեմիկոս Հ. Օրբելին. « Դավթի մեծահոգությունը անխորտակելի ժայռի պես ամուր հիմք ունի՝ հաղթանակի հավատ, իսկ այդ հավատը բխում է հայրենիքն ու հարազատ ժողովիդին պաշտպանելու արդար գործի անսասան գիտակցությունից»:1

Հայոց էպոսի հերոսները ներողամիտ են, հանդուրժողական, չեն իշխել, նվաճել, տիրել այլ ազգերի: Չնայած նրանք սիրում են փառք ու պատիվ, բայց իշխանատենչ ու իշխանություն սիրող չեն: Սանասարն ու Բաղդասարը, խալիֆի դատաստանը տեսնելուց և նրա զորքը թրի տակով անցկացնելուց հետո, թողնում- հեռանում են այդ երկրից: Նրանք մերժում են նաև իրենց պապի՝ Գագիկ թագավորի խնդրանքը, ժառանգելու իր թագավորությունը: Մեծ Մհերը չի ընդունում այրիացած Իսմիլ խաթունի առաջարկը՝ բազմելու Մըսրի թագավորության գահին: Դավիթը մեծահոգաբար պարտված զորքին հրամայում է տուն գնալ և խորհուրդ տալիս էլ երբեք չհարձակվել Սասունի վրա: Նույն կերպ է վարվում նաև Փոքր Մհերը: Իշխանատենչության բացակայությամբ պետք է բացատրել այն, որ էպոսի հերոսներն ամուսնանում են թագուհիների հետ, բայց այդպես էլ ո՛չ իրենք են թագավոր դառնում, ո՛չ էլ թագուհիներն են պահպանում իրենց նախկին կարգավիճակը: Էպոսի հերոսները չեն ուզում տիրանալ ուրիշների թագավորությանը, ուզում են, որ յուրաքանչյուր ժողովուրդ ապրի ինքն իր համար, լինի իր գլխի տերը: Նկատենք, որ էպոսի հերոսները հիմնականում միայնակ են կռվում թշնամու դեմ, որը վկայում է նրանց անսահման քաջության մասին: Անշուշտ, էպոսի հերոսների վարքը հումանիզմի ու հանդուրժողականության բարձրագույն դրսևորում է: Էպոսում, առասպելներում և հեքիաթներում մեր հերոսները ուժեղ են, որովհետև բարոյական

1. Հ. Օրբելի, Սասունցի Դավիթ, 1961, էջ XVIII

են և բարոյական են, որովհետև ուժեղ են։ Էպոսի մեր հերոսները միայն չեն պայքարում օտար նվաճողների դեմ։

Նրանք հասարակ, աշխատավոր մարդու կողքին են, օգնում են գյուղացուն առօրյա աշխատանքներում։ Սանասարն ու Բաղդասարը առաջինը տուն են կառուցում «պզտիկ» մարդկանց համար, հետո նոր՝ իրենց։ Նրանք գերմարդկային ուժով օժտված հսկաներ են, որոնք մեծանում են ոչ թե տարիներով, այլ օր օրի, ժամ առ ժամ, միանձնյա կռվում են քառասուն փահլևանի դեմ, մեկ օրում տասը տնատեղ են փորում, ։ Չնայած հաղթանդամ մարմնին ու գերմարդկային ֆիզիկական ուժին՝ էպոսի հերոսները խորամանկ չեն, նենգ չեն, իշխող չեն։ Նրանց հայ ժողովուրդն օժտել է բարությամբ, միամտությամբ, արդարամտությամբ, առաքինությամբ և պարզությամբ։ Եվ գուցե հենց այդ հատկանիշների համար էլ նրանց տվել է «Ծուռ» մականունը։

Վերջաբան

Այսօր հայրենասեր քաղաքացի, բարոյական արժեքները գնահատող անհատ դաստիարակելու համար խիստ կարևոր է կրթական գործընթացում լիարժեք և համակողմանի կիրառել հայ ժողովրդական էպոսը:

«Սասնա ծռեր» դյուցազնավեպը համամարդկային գաղափարներ արծարծող լայնակտավ էպիկական ստեղծագործություն է: Այն դաստիարակության անսպառ աղբյուր է, նրանով դաստիարակվել, ոգեշնչվել ու ոգևորվել են բազմաթիվ սերունդներ: Էպոսում շատ – շատ են դեռահասներին արժեքավոր դասեր տվող օրինակները: Այդ օրինակները մեր աճող սերնդի մեջ կարմատավորեն բարոյական լավագույն հատկանիշները: Այդպիսի հատկանիշներից է *ազնվությունը* : Այն էպոսի գաղափարական հատկանիշներից է: Ազնվությունը մեր հերոսների համար նպատակին հասնելու ուղիղ և միակ ճանապարհն է: Նրանք ազնիվ են և անկեղծ ինչպես իրենց, այնպես էլ օտարների հետ հարաբերություններում: Նրանց մարդկայնությունը ծնվում է ազնվությունից: Էպոսում բազմաթիվ են այդպիսի օրինակները: Մեր ազնիվ հերոս Դավիթը զենքը չի բարձրացնում քնած Մելիքի վրա, նրան արթնացնում է և կռվի հրավիրում: *Աշխատասիրությունը, հարգանքը աշխատանքի, աշխատողի նկատմամբ:* Մեր ժողովուրդ դեռ վաղնջական ժամանակներից գիտեր, որ ամեն բարիքի սեղծողը աշխատանքն է, որ հասարակության զարգացման հիմքում ընկած է աշխատանքը: Մատաղ սերնդի դաստիարակության հիմքում պետք է ընկած լինի ազնիվ աշխատանքով արարելու, զարգանալու սկզբունքը: Մեր էպոսի հերոսները գոյության հիմքը տեսնում են ազնիվ աշխատանքի մեջ: Մանուկ Դավիթը չէր ուզում քեռու տանը ևս մեկ սպառող լինել:

Էլի՛, մեզ աշխատող դարձու:
Դատենք, աշունք բերենք մեր աշխատանք:
Ժողվենք վեր իրարու, ուտե՛նք, ապրենք:

Բաղդասարը Սանասարին ասում էր.

«Եթե չաշխատիս, չուտիս:
Ով աշխատի, նա ուտի...
Մենք գնանք մշակության,
Աշխատենք, ուտենք»:

Խաղաղ ապրելու և արդար աշխատանքի գովքն է անում Ծովինարը.

….Աշխարք արև կա,

աշխարք արեգակ կա:

Ամեն մարդ խըտ ուտ գործին,

Ոմանք խըտ ջըրին, օչխրին,

Ոմանք էլ խըտ էնոնց ռընջբրութենին»:

Էպոսում գովերգվում է ինքնաբուխ, հանուն ազգի ու ժողովրդի, հանուն ընդհանուր բարօրության կատարված աշխատանքը: Սանասարն ու Բաղդասարը իրենց համար տուն կառուցելուց առաջ հասարակ մարդկանց համար են տներ կառուցում: Մեծ Մհերը սասունցիների համար կառուցում է Մարութա բարձրիկ Աստվածածին վանքը, որսատեղին: Ձենով Օհանի՝ Մարութա բարձրիկ Աստվածածին վանքը վերաշինելու կոչը լսում են յոթ քաղաքների բնակիչներ ու ուրախությամբ ելնում, գալիս են Դավթի տուն: Ժողովրդի իդեալը արդար, ազատ, ազնիվ աշխատանքն է: Այս ամենին պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել ոչ միայն էպոսի ուսուցման պրոցեսում, այլև մեր կրթական գործընթացի ողջ ընթացքում:

Հաջորդ բարոյական սկզբունքը, որը մեր էպոսի գաղափարական հիմքն է, նրա միջուկը, *հայրենասիրությունն* է: Էպոսի միջոցով հայրենասիրության դասեր տալը շատ կարևոր է: Էպոսում ժողովրդի ցասումն ամենից առաջ ուղղված է արտաքին բռնակալության դեմ: Էպոսում հայրենասիրությունը համազգային է, քանի որ թշնամին գալիս է ոչ միայն շահագործելու, կողոպտելու, այլև ոչնչացնելու ժողովրդին, կործանելու երկիրն այնպես, որ «Ալ Սասուն անուն չեղնի աշխարքի մեջ»: *Անձի և հասարակության փոխհարաբերության* հարցը նույնպես էպոսում բարոյական սկզբունքի հարց է: Դյուցազներգությունը սկսվում է Ծովինարի հայրենասիրական վսեմ արարքով:

«Որ ես են կռապաշտ թագավոր չառնիմ

Ձամեն տի սպանի իմ պատճառով,.

Աղեկն էն է, ես էրթամ,

Ուրիշ մարդու թող բան չըլնի»:

Ծովինարը բարձր հոգեկան ուժի տեր կնոջ հոյակապ կերպար է, և դա մենք պետք է հաշվի առնենք դաստիարակության գործընթացում:

Հումանիզմը նույնպես բարոյական սկզբունք է մեր էպոսում, նրա հերոսները օժտված են նաև խոր մարդասիրությամբ, մարդկանց նկատմամբ սեր ու համակրանք են տածում՝ լինի սասունցի պառավը, թե Մսրա ծերունին: Այդ բարոյական արժեքները ավանդույթի ուժով դաստիարակել են շատ սերունդներ: Դրանք այսօր էլ կենսունակ և լավագույն միջոցներից են՝ նոր սերունդներին դաստիարակելու գործում:

Կանայք յուրահատուկ դերակատարություն ունեն էպոսում: Նախ ընդգծենք, որ, ինչպես հավաստում է հայ ժողովրդի այս հանճարեղ ստեղծագոր:ծությունը, հազար և ավելի դարեր առաջ հայ հասարակության մեջ կինն ունեցել է առանձնահատուկ դերակատարություն և դիտվել է տղամարդուց ոչ պակաս էական՝ որպես հասարակության անդամ և ընտանիքի բաղկացուցիչ: Էպոսում դա ձևակերպված է հստակ և սեղմ.

«Առյուծն առյուծ է, էգ էղնի, թե որձ»:

Սասունցի կանայք հավասար են իրենց տղամարդկանց: Պայքարի ժամանակ նրանց կողքին են, մնացած ժամանակ՝ օջախի պահապանն ու երեխաների մայրը: Նրանք հավատարիմ են, հպարտ և միևնույն ժամանակ՝ անձնազոհ: Դրա վառ օրինակն է Արմաղանը: Մեր գործունեության ողջ ընթացքում պետք է հիշենք, որ մենք ենք դաստիարակում ենք «առյուծածին մայրեր», ապագա զինվորներ, մհերներ ու դավիթներ: Սասունցի Դավթի վեհ ոգին պետք է դրվի հայ զինվորի կերպարի հիմքում:

«Սասունցի Դավիթ» էպոսը եղել և մնում է կրթական ծրագրի կարևորագույն թեմա, և նրա ուսուցումը պահանջում է անհրաժեշտ հմտություն: Էպոսի պատգամների միջոցով հայկական դպրոցներում կդաստիարակվեն ազգային ու համամարդկային ճիշտ գաղափարներով զինված քաղաքացիներ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Սասունցի Դավիթ Հայկական ժողովրդական էպոս, Եր., 1961

2. Աբեղյան Մ., Սասնա ծռեր, երկեր, հ. Ա,Ը Եր. 1966,

3. Զաքարյան Ս., Հայոց ինքնության հիմնահարցեր, ԵՊՀ հրատ., Եր. 2020

4. Օրբելի Հ., Սասունցի Դավիթ, 1961,

5. Հայկական Սովետական Հանրագիտարան, Հատոր 4, Եր. 1978

6. Մարդյան Գ., Սասունցի Դավիթ էպոսի ուսուցման մի քանի խնդիրներ, Եր. 2015

7. Միրզոյան Հ.Ղ., Էպոսը որպես տվյակ ժողովրդի ինքնության ուսումնասիրության աղբյուր / օղուզական էպոսի օրինակով/, «Հայոց ինքնության հարցեր», Եր.2012

8. www.google.ru,https://anigasparyan.wordpress.com/2013/11/18 /հայրենասիրությունը-Սասունցի Դավիթ/

9. Արուսյակ Սահակյան, «Սասնա ծռերի» պատումների քննական համեմատություն, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1975